ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՆԱԽԱՄԵԾԱՐ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Հաճույքն ունեմ հայտնելու Ձերդ Սրբությանը, որ կարդինալ Կարոլ Վոյտիլան ընտրվել է Հռոմի Եպիսկոպոս և կաթոլիկ եկեղեցու Պապ: Նա ընդունել է Հովհաննես-Պողոս Բ անունը: Կիրակի, հոկտեմբերի 22-ին, Նորին Սրբությունը հանդիսավոր մի պատարագով նշելու է Իր հայրապետության սկիզբը:

Հարգալից և եղբայրական զգացումներով՝

ԿԱՊՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՆՈՐԴ

Վատիկան,
18 հոկտեմբերի 1978 թ.

*
* *

ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

Վատիկան-Հռոմ

Մեծ ուրախություն է Մեզ համար Հայաստանյայց առաքելական եկեղեցու և անձամբ Մեր անունից հղել Ձեզ Մեր սրտագին շնորհավորանքը քահանայապետական աստիճանին Ձեր բարձրանալու առիթով: Աղոթում

ենք, որ ձեր պատմական մեծ եկեղեցին, Ձերդ Սրբության հովվապետությամբ ու միշտ ոգեշնչված սուրբ Հոգով, այսուհետև ևս աշխարհին բաշխի ավելի լույս, ավելի հույս և ավելի սեր, ի խնդիր ավելի արդար և ավելի խաղաղ մարդկային կյանքի՝ բոլոր ժողովուրդների երջանկության համար:

Հաճեցեք ընդունել Մեր ամենաբարի մաղթանքները և եղբայրական հարգալից սիրո զգացումներն ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
18 հոկտեմբերի 1978 թ.

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Այս օրերին, երբ Տերն ինձ վստահում է այս մեծ առաքելությունը ի ծառայություն իր եկեղեցու, հայտնում եմ Ձեզ իմ սրտագին շնորհակալությունը Ձեր մխիթարող խոսքերի համար: Վստահեցնում եմ Ձեզ, որ իմ հաստատ որոշումն է՝ սուրբ Հոգու օգնականությամբ անվարան առաջ ընթանալ մեր եկեղեցիների միջև լիակատար հաղորդության իրականացման ճանապարհի վրա:

Ընդունեցեք իմ եղբայրական սիրո հավաստիքը ի Քրիստոս, որ հույսն է մեր բոլորի:

ՊԱՊ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ

Վատիկան,
2 նոյեմբերի 1978 թ.

ԼՈՍԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐՍԳԱՐԱՆ